



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

« 29 » *ապրիլ* 2019թ.

№ *2/1806-1h*

Հ Ր Ա Մ Ա Ն

Ա.ԽԱԼԱԹՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 10-ի թիվ 22/2019 եզրակացությունը


Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները խախտելու, տրված հանձնարարականները և ընդունված որոշումները ոչ պատշաճ ձևով կատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ընթացիկ հսկողության թիվ 1 /Արաբկիրի/ բաժնի գլխավոր հարկային տեսուչ Անդրանիկ Վարդանի Խալաթյանի նկատմամբ կիրառել «բանավոր նկատողություն» կարգապահական տույժը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 4/29/2019 19:17:37 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142



Դ.ԱՆԱՆՅԱՆ